ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Ես՝ Կարեն Վահանի Հակոբյանս, սփորև ներկայացնում եմ իմ կենսագրությունը և գործունեության մասին տվյալները.

1) ծնվել եմ 1992 թվականի նոյեմբերի 12-ին Հրազդան քաղաքում,

2) 1999 թվականին ընդունվել եմ և 2009 թվականին գերազանցությամբ ավարտել եմ Հրազդան քաղաքի Ավետիք Իսահակյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցը,

3) 2009 թվականին ընդունվել եմ և 2013 թվականին գերազանցությամբ ավարտել եմ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ ստանալով իրավագիտության բակալավրի որակավորում,

4) 2013 թվականին ընդունվել եմ և 2015 թվականին գերազանցությամբ ավարտել եմ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի որակավորում,

5) 2015 թվականին ընդունվել եմ և 2018 թվականին ավարտել եմ Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան, 2018 թվականին պաշտպանել եմ թեկնածուական ատենախոսություն «Անձի պատշաճ վարչարարության իրավունքը՝ սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում» թեմայով՝ ստանալով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան,

6) հեղինակ եմ թվով 10 գիտական հոդվածների, որոնք տպագրվել են Հայաստանի տարբեր գիտական հանդեսներում,

7) 2019 թվականից 2020 թվականը սովորել եմ Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցում և 2020 թվականի հունիսին ստացել եմ փաստաբանական գործունեության արտոնագիր,

8) 2014 թվականի ապրիլից մինչև 2015 թվականի դեկտեմբերը աշխատել եմ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանում՝ որպես քաղաքացիական և վարչական պալատի դատավորի օգնական,

9) 2015 թվականի դեկտեմբերից մինչև 2017 թվականի մարտը աշխատել եմ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանում՝ որպես իրավական փորձաքննությունների ծառայության ավագ մասնագետ,

10) 2017 թվականի մարտից մինչև 2019 թվականի փետրվարը աշխատել եմ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանում՝ որպես Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական,

11) 2019 թվականի փետրվարից մինչ 2020 թվականի մարտը աշխատել եմ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանում՝ որպես իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ,

12) 2020 թվականի մարտից մինչ այժմ աշխատում եմ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակում՝ որպես պահանջները քննող մասնագետ (իրավաբան),

13) 2018 թվականի սեպտեմբերից մինչ այժմ աշխատում եմ Երևանի պետական համալսարանում՝ որպես սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ,

14) դասավանդել եմ Արդարադատության ակադեմիայում և Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրում,

15) հանդիսացել եմ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծի աշխատանքային խմբի անդամ, դատավորների թեկնածուների 2019 թվականի որակավորման գրավոր քննության վարչական մասնագիտացման աշխատանքների գնահատման հանձնաժողովի անդամ, ինչպես նաև ապաստանի ոլորտում դատական իշխանության կարողությունների հզորացման հարցերով ՄԱԿ ՓԳՀ-ի գրասենյակի աջակցությամբ գործող աշխատանքային խմբի անդամ՝ որպես Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի ներկայացուցիչ:

16) ամուսնացած եմ:

Կարեն Հակոբյան՝ _____ *13.09.2022թ.*